

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

04 AUG 2010

ՂԱՄԱՐԼՈՒ—ՎԵԴԻ
ՅՐՁԱՆԱԿԱՐԱՐՈՒՄԸ

628

2-17

ԳՐԱԴԱՐԱՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

31 MAY 2013

ՀՅԱՀ ԿՈՄԻՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄՈՑ

628

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ-17 ԿԴ.

ՂԱՄԱՐԼՈՒ—ՎԵԴԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

3393

1007
30349



1934

ԹԵՐԵՎԱՆ

ՂԱՄԱՐԼՈՒ—ՎԵԴԻ ԾՐՁԱՆՆԵՐԻ ԶՐԱՄԱՏԱ- ԿԱՐԱՐՈՒՄԸ

Անհիշելի ժամանակներից ի վեր հայտնի յե, վոր խմելու լավ ջուրը հանդիպանում ե առողջության ամենահիմնական գործոններից մեկը: Հնուց մինչև մեր որերը մնացած զրամատակարաման շատ խոշոր կառուցվածքները վկայում են, թե ինչ մեծ նշանակություն ելին տալիս այդ խնդրին պատմական, հին ժողովուրդները (յեզիպտացիք, հույները, հոռվիմեացիք և այլն): Յեղել են մարդիկ, վորոնք՝ վորպեսզի «անմահացնեն» իրենց անունը, իսկ հաճախ վորպեսզի հեղինակություն ձեռք բերեն և ազգեն մասսայի վրա, վորեե զրագուրկ բնակավայրի համար խմելու առողջ ջուր ելին բերում: Հայաստանի գյուղերի աղբյուրներից շատերի վրա կան քարե տախտակներ, վորոնց վրա զրված ե աղբյուրը կառուցողի անունն ու կառուցման տարին. մի խոսքով, զրամատակարաման յուրաքանչյուր մի կառուցվածք համարվում եր վորպես պատմական հուշարձանի մի տեսակը: Ազ-

Պատ. Խոբազիկ՝ Հ. Յաղուրյան

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնված ե արտադրության 1934 թ. հունիսի 25-ին

Ստորագրված ե տպագրելու 1934 թ. հունիսի 25-ին

Թույլատրված ե. Գլավլիսի լիազոր № 275

Հրատ. Ա 120, տիրած 1000, Պատվեր № 439

ԳՅՈՒՂՂԱՐՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

գաբնակության նման վերաբերյունքը դեպի խմելու ջուրը միանգամայն հասկանալի յե գառնում, յեթե նկատի առնելու լինենք ջրի դերը զանազան հիվանդությունների, ինչպես որինակ, վորովայնային տիֆի, խոլերայի, փորաճարինքի և այլ հիվանդությունների տարածման խնդրում։ Զորաբանակները շատ անգամ պարտություն եյին կրում վոչ թե այն պատճառով, վոր հակառակորդից ավելի փոքրաթիվ եյին, վատ եյին զինված կամ պակաս քաջ եյին, այլ չնորհիվ վատառողջ խմելու ջրի գործածության, վորի հետևանքով տարածվում եյին այնպիսի տարափոխիկ հիվանդություններ, վորոնք ուղղակի հնձում եյին այդ բանակները։

Այդ հանգամանքը հաշվի յե առնված կապիտալիստական յերկրների կողմից և ներկայումս մարդկանց վոչնչացնելու բազմաթիվ միջոցներին ավելացել են նաև «մանրեաբանական պատերազմը», այսինքն ազգաբնակության վոչնչացումը, գլխավորապես խմելու ջրերը տարափոխիկ հիվանդություններ առաջացող մանրեներով, մասնավորապես վորովայնային տիֆի, խոլերայի, փորաճարինքի և այլն վարակման միջոցով։

Ազգաբնակության ջրամատակարարման վո-

րեկ բաց ջրամբարն ավելի հեշտ ե վարակել, քան ծածկվածը. վորեւե գետի կամ ջրանցքի ջրի վարակեն ավելի հեշտ ե, քան առանձին ջրհորների և հատկապես մեկ աղբյուրի, վորտեղից խողովակներով ազգաբնակությանը ջուր ե մատակարարվում։ Մյուս կողմից, բաց ջրամբարների ջուրը յերբեք չի կարելի առողջ համարել։ Նա սովորաբար շատ կեղառատ ե լինում և հանդիսանում ե բազմաթիվ վարակների բուն։ Վերջապես այդպիսի ջրերն անհամ են, ամառվա ընթացքում տաք, ձմեռը՝ չափազանց սառը, իսկ սառելու դեպքում ազգաբնակությունն ստիպված ե լինում հալել սառույցը կամ ձյունը՝ ջուր ստանալու համար։

Այդ դրության մեջ են գտնվում Հայաստանի մի քանի շրջաններ, ինչպես որինակ՝ Սարդարաբագի, Ղամարլի, Վեդու, Վաղարշապատի, այսինքն՝ գլխավորապես տեխնիկական կուլտուրաների շրջանները, վորոնք զարգանալու ավելի մեծ հեռանկարներ ունեն և աչքի յեն ընկնույթ կուեկտիվացման բարձր տոկոսով։ Այդ շրջանները Հայաստանում մահացության և հիվանդությունների ամենամեծ տոկոսն են տալիս, վորը հետեւանք ե գլխավորապես բաց տեղերից վատառողջ խմելու ջրի գործածության։ Այսինչ Հայաստանում լավորակ ջրերի աղբյուրների թիվը շատ

ավելի յե, քան Միության վորհե այլ հանրապետության մեջ:

Յեթե հին ժամանակներում ջրամատակարարման խոշոր կառուցվածքները շինվում եյին տեխնիկայի հետամնաց պայմաններում, չնորհիվ ստրուկների աշխատանքի, մի բուռն արտօնյալ մարդկանց համար, ներկայումս վերոհիշյալ շրջանների կոլտնտեսությունները՝ խորհրդային որդանների ղեկավարությամբ, ի վիճակի յեն ոգտագործելու իրենց համար այդ շրջանների աղբյուրների ջուրը: Դա հնարավոր և անհրաժեշտ, հարկավոր և միայն գիտակցել խնդրի կարևորությունն ու անհետաձգելիությունը:

Կապիտալիստական յերկրներում ջրամատակարարման մի շարք լավագույն նախազերք անկատար են մնում միայն այն պատճառով, վորնանց իրազործումը պահանջում եր այն շրջանի, վորով պետք և անցներ ջրմուղը, ամբողջ ազգաբնակության մասնակցությունը: Կապիտալիստները չեն կարող և չեն ել ցանկանում կազմակերպել մասսաներին նման աշխատանքների շուրջը, քանի վոր հաճախ դա ձեռնտու չե գոյություն ունեցող ջրմուղի տերերին, վորոնք ջրմուղն իրենց յեկամտի աղբյուրն են դարձնում: Մեր ջղմուղային կառուցվածքները նույնպես հանդիպանում են յեկամտի աղբյուր ջրամատակարար-

վող շրջանի ամբողջ աշխատավորության համար, սակայն այդ յեկամուտն արտահայտվում ե այլ կերպ. նաև, վոր խիստ կերպով կրճատվում են կամ բոլորովին վոչնչանում են ջրային գանազան վարակները, յերկրորդ՝ բարձրահում ե աշխատանքի, արտաղբողականնությունը, յերրորդ՝ բարելավվում են աշխատավորության կուլտուր-կենցաղակին պայմանները (հնարավոր և գառնում՝ բաղնիքների, լվացքատների, բաղմահարկ բարեկարգ տների, կոյուղու և այն կառուցումը) և շնորհիվ այդ բոլորի կոլտնտեսականներին հնարավորություն և տրվում ավելի արագ տեմպերով ստեղծելու հարուստ և կուլտուրական կյանք:

Մենք ամբողջ ժամանակ խոսում եյինք ազգաբնակության խմելու ջրի մասին, սակայն լավ չուրը պակաս նշանակություն չունի նաև անառումների համար, մասնավանդ լավորակ ջրի մեծագույնը են առաջադրում ցեղական անասունները:

Իսկ արդյունաբերությունը, տրակտորներն ու մեքենաները: Հայտնի յե, վոր մննդի (պահածոների) արդյունաբերությունը չի կարող զարգանալ այստեղ, վորտեղ չկա լավորակ ջուր և այն ել վոչ կոշտ ջուր. ուղղիատորները փչա-

նում են կոշտ ջրից, շոգեկաթսաների պատերը
ծածկվում են վատորակ ջրի մեջ պարունակվող
աղերի հաստ շերտով:

Ներկա բրոշյուրում մենք ցանկանում ենք
ընության առնել Ղամարլիի և Վեդու շրջանների
ջրամատակարարման խնդիրը վոչ թե այն պատ-
ճառով, վոր այդ շրջաններն ավելի լավ են ու-
սումնասիրված մեր կողմից, այլ նրա համար, վոր
այդ շրջաններն ավելի մեծ կարիք ունեն առողջ
խմելու ջրի, և տնտեսական ավելի խոշոր նշա-
նակություն ունեն, վորպես տեխնիկական կուլ-
տուրաների շրջաններ, վորտեղ դեռ ևս այդ կուլ-
տուրաների համար նոր հողամասեր հատ-
կացնելու հնարավորությունները լիովին չեն ի-
րագործված: Դուքի ջրանցքի կառուցումից հետո
հաղարավոր հեկար պաղաքեր հողամասեր մշա-
կելի կդառնան:

Ղամարլիի շրջանում եղտնվում Հայաստանի
ամենախոշոր գործարաններից մեկը՝ Դավալույի
ցեմենտի գործարանը. բացի դրանից, մոտակա
տարիներում այստեղ, անկասկած, կստեղծվի և
անդի տեղական արդյունաբերություն: Այս
տվյալները թերագրում են մեզ Վեդու և Ղամար-
լիի ջրամատակարարումը համարել առաջնահերթ
անհրաժեշտություն: Վոր աղբյուրներից են հնա-

րափոր կատարել այդ ջրամատակարարումը:
Քննենք այդ աղբյուրները: Նախ և առաջ Գառնու-
կ Վեդի-Զայի ջրերը, վորից հարլուրավոր տարի-
ների ընթացքում ոգտվում ե ազգաբնակությու-
նը, ջուրը վերցնելով կամ անմիջապես գետերից
կամ այդ գետերից սկիզբ առնող վոռոգման
ջրանցքներից: Այդ գետերի պլատը և կեղտու-
մուրն անպետք ե խմելու համար: Զըի վորակն
ավելի վատացավ Ղուերի ջրանցքի կառուցու-
մից հետո, քանի վոր ջրանցքի ջուրը՝ թափ-
վելով Գառնի-Զայը, ավելի իջեցրեց ու վատթա-
րացրեց նրա վորակը: Կարելի յե, ի հարկե, ֆիլ-
տրացիոն կայանների միջոցով մաքրել այդ ջու-
րը և զգալի չափով բարձրացնել նրա վորակը և
գործածության համար անվաս դարձնել, սակայն
դա կպահանջի հսկայական նյութական միջոցներ,
իսկ հետագայում նաև խոշոր ծախքեր ֆիլտրելի
շահագործման համար: Հետևապես Գառնու և
Վեդի-Զայի ջուրը կարելի յե ոգտագործել միայն
այն գեպքում, յեթե շրջանում չինելին ջրամա-
տակարարման այլ և ավելի լավ աղբյուրներ:
Ճիշտ և, այդ շրջանների ազգաբնակությունը
վաղուց ի վեր միջոցներ ե ձեռք առել լավացնե-
լու ջրի վորակը՝ պատրաստելով տուփ քարից
անային ֆիլտրաքամիչներ, կամ գործածելով շիբ,

սակայն չնայած այդ միջոցառումների ողտավետությանը, գերախոսաբար նրանք ջրի վորակը բարձրացնում են շատ աննշան չափով, քանի փոք ջրի միջից վերացնում են միկրոօրգանիզմների մի մասը, իսկ ջրի մի կաթիլի մեջ նրանց քառակը համառում է հարյուրների, հազարների և յերեմն միլիոնների։ Հետեապես այդ տարրական միջոցառումները՝ այլ միջոցառումների բացակայության հետևանքով, իրենց նպատակին չեն համառում, մասնավանդ հեղեղների ժամանակ, կամ ջուրն անմիջապես փոռոգման ջրանցքներից վերցնելիս։ Վոր հիշյալ շրջանների ազգաբնակությունը չափազանց նեղվում ու տաճնջվում է խմելու առողջ ջրի բացակայությունից և վոր այդ խնդրի լուծումը հանդիսանում է կարևոր և անհետաձգելի խնդիր, այդ գիտակցում են բոլորը և ապացույցների կարիք չի պահանջում։ Հարցի եյությունը հետեապես դրանում չե, այլ նրանում, թե ինչպես տեխնիկապես իրագործել առաջադրված խնդիրները, վորպեսզի խոշոր կապիտալ ներդրումների կարիք չզգացվի և բացի դրանից, աղբյուրներից վոր մեկն ընտրել ջրամատակարաման համար։ Այսպիսով, մենք պետք ենքաղեքին իմաստական կողմով, վորն ակնբախ ե

համար, այլև տեխնիկա-անտեսագիտական կողմով, քանի վոր լավագույն նախագիծը կարող է ներկայումս անիրագործելի դառնալ հենց միայն այն պատճառով, վոր նա կպահանջի խոշոր ներդրումներ, վորոնց ձեռք բերելն այնքան ել դյուրին չե։

Վեգու և Դամարլի շրջանները չափազանց շատ աղբյուրներ ունեն, վորոնց ջրերի քանակը միանգամայն բավարար էն. նրանց հետազոտության և անալիզների նյութերն ապացուցում են, վոր նրանցից մի քանիսներն են միայն, վոր կարող են ջրամատակարաման աղբյուր հանդիսանալ, իսկ նրանցից շատերը պիտանի չեն։ Թվինք նրանցից մի քանիսը՝ Նովուզլույի, Ռուչքյորփու, Սադարակի, Ամու և Դամարլի աղբյուրները։ Անալիզը ցույց է տվել, վոր այդ աղբյուրների ջուրը նախ և առաջ իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ հանքային աղեր, վորոնք ջուրը խմելու համար անպետք են դարձնում։ Նրանցից շատերը (որ Ամու ջուրը) արժեքավոր և վորպես հանքային ջուր, վորը պետքական և բժշկական նպատակների համար։ Մյուս աղբյուրները մեծ քանակությամբ աղեր պարունակելուց բացի ունեն բարձր ջերմություն, վորը համառում է 21—22° (Ախ-Զոլ). Հիսուսներ

յեռ այս մասին, վոր կան այնպիսի
բազաղըություններ, վորոնք այդ աղբյուրների
ջուրը դարձնում են անպետք վոչ միայն խմելու,
այլ և տնտեսական կարիքների համար:

Դրանով ե բացատրվում այն հանգամանքը,
վոր տեղական աղգարնակությունը Գառնու և
Վեդի-Զայի պղտոր և կեղասոտ ջուրը գերադա-
սում ե վերոհիշյալ աղբյուրների վճիռ ջրից, Հարց
և առաջ գալիս, թե արդյոք հնարավոր չե՞ այդ
գետերից ջուր վերցնել նրանց ակունքներից և
տալ աղգարնակությանը, այսինքն ջրմուղի կա-
ռուցման միջոցով այդ ջուրը պահպանել հանա-
պարհին կեղտոտվելուց: Գտանի-Զայի նկատմամբ
դա կնշանակե ջուրը բերել Բաշգառնու աղբյուր-
ներից, վորոնք Ղամարլիվ շրջանի մոտակա ա-
ռաջին բնակավայրից մոտ 20 կիլոմետր են հե-
ռու գտնվում, իսկ Վեդի-Զայի նկատմամբ դա
կնշանակե ջուրը բերել այդ գետի ակունքների
մոտ, գետի ափից վոչ հեռու ընկած քյանրիզներից:
Բաշգառնու աղբյուրների ջուրը, ըստ անալիգի
տվյալների, չափաղանց լավ վորակ ունի և չի զի-
ջում կըրխ-Բուլաղի ջրին, վորտեղից և բերած
և Յերեվանի ջրմուղը: Վեդի-Զայի քյանրիզների
ջուրն ըստ վորակի ավելի ցածը ե և բացի դրա-
նից, քյանրիզների պատրաստումը պահանջում է

մեծ ծախքեր և այնտեղից ջուր բերելն ավելի
մեծ գժվարությունների հետ և կապված, քան
Բաշգառնու աղբյուրներից:

Մենք քննության առանք 2 շրջանում գոյու-
թյուն ունեցող աղբյուրները, սակայն կանգ չա-
ռանք ստորյերկրյա ջրերի վրա: Քիչ չեն այն
բնակավայրերի թիվը, վորոնք մասնակի կամ ամ-
բողջովին բավարարվում են ստորյերկրյա ջրերով
(Մոսկվա, Խարկով և այլն): Խնչղես հայտնի յե,
ստորյերկրյա ջուրն ստացվում ե առաջին ջրա-
տար շերտերից 2—3 և հաճախ տամյակ մետր
խորությամբ ջրհորներ փորելու միջոցով: Վեդու
և Ղամարլիվ շրջաններում այդպիսի ջրհորներ
կան, բայց նրանց ջուրը չեն ոգտագործում գրլ-
խավորապես այն պատճառով, վոր այդ ջրի համե-
անդուրեկան ե՝ շնորհիվ նրա մեջ առատությամբ
պարունակված աղերի: Ավելի խորը գտնվող Ջրա-
տար շերտերի ստորյերկրյա ջրերը, յեթե նրանք
գտնվում են ջրակայուն շերտերի միջև և վոր-
պես կանոն յենթակա յեն ավելի կամ պակաս
հաշման՝ կոչվում են արտեզյան ջրեր:

Վերջին տարիների ընթացքում Զանդիբասսարի
շրջանում Հայջրտնտեսությունը փորել և այդպի-
սի արտեզյան ջրհորներ: Նրանցից շատերի ջուրը
լավ վորակի յե: Նման ջրհորների արժեքը, նա-

յած նրանց խորության, տատանվում ե 7—20
հազար ոռոքի և ավելի։ Յեթե ընդունելու լինենք,
վոր Վեդու և Ղամարվի շրջանների յուրա-
քանչյուր գյուղ պետք ե ունենա մեկ այդպիսի
ջրհոր, իսկ մեծ գյուղերը՝ 2—3 և ավելի, անհրա-
ժեշտ կլինի փորել մոտ 80 արտեզյան ջրհոր, 600
հազարից մինչև 1,600 հազար ո. արժողությամբ։
Արտեզյան ջրամատակարարման առավելու-
թյունը կայանում է նրանում, վոր արագ ե իրա-
գործում՝ նայած պահանջին ու նյութական
միջոցներին և հետեապես չի պահանջում խոշոր
միանվադ կապիտալ ներդրումներ։ Այս վերջին
հանդամանքը շատ կարեվոր ե և այդ ձևի ջրամա-
տակարարման առավելությունն է հանդիսանում։
Պակասավոր կողմն այն ե, վոր շատ հաճախ ջու-
րը վատ վորակի յե լինում, շնորհիվ ջրի կոշտու-
թյան և բարձր ջերմության, վորը սովորաբար
ավելի բարձր ե լինում, յեթե ջուրը ցածր շեր-
տերից ե խփում։ Հետեապես արտեզյան ջուրը
հաճախ ունենալով այդ շ պակասությունը, մնա-
ցած բոլոր կողմերով անբասիր ե։ Մեկ պակա-
սավոր կողմն ել այն ե, վոր արտեզյան ջրերի պա-
շարն սպառվող ե, չնայած վոր այդ պաշարը
կարող ե յերկար տարիներ բավարարել ազգա-
բնակության կարիքը, յեթե հատուկ միջոցներ


ձեռք առնվեն ըստ կարիքի և խնայողությամբ
ծախսելու ուղղությամբ։ Վերջապես արտեզյան
ջրերը վոչ բոլոր գեպքերում յերկրի մակերեսից
բարձր են խփում և շատ հաճախ ստիպված են
լինում ջրհան մեքենաներով ջուրը դուրս քաշել,
վորը բարդացնում ու թանգացնում ե նման ջրը-
հորների շահագործումը։ Անգամ այն դեպքերում,
յերբ ջուրը յերկրի յերեսն ե դուրս դալիս և
կարիք ե լինում այդ ջուրը տանել վորեւ բնա-
կելի շենք՝ բաղնիք, լվացքատուն, արդյունաբե-
րական ձեռնարկ, մեքենատրակտորային կայան՝
պահանջվում ե կառուցել թանգարժեք ջրմուղա-
յին կայաններ, աշտարակներ՝ թե ճնշման և թե
ծախսվող ջրի քանակը կարգավորելու համար։
Այդպիսի կառուցվածքների պահանջը կդգացվի
առաջին հերթին շրջանային կենտրոններում
(Ղամարվում և Վեդիում), վորտեղ յեղած և
կառուցվող կուլտ-կենցաղային սպասարկման շեն-
քերը (բաղնիքները, ակումբները, ֆիզկուլտուրայի
դահլիճները և այլն) և ձեռնարկները կարող են
նորմալ գործել այն դեպքում, յեթե ջուրն ստաց-
վի ճնշումով։ Նույնը վերաբերում ե և գյուղե-
րին, վորտեղ բաղնիքային շինարարություն չի
կատարվում, հատկապես լավ ջրի բացակայու-
թյան պատճառով, իսկ լավ ջուր յեղած դեպ-

բում ել յուրաքանչյուր բաղնիքի համար ձնշմանց
ցանց կառուցելու միջոցների բացակայության
պատճառով:

Մենք ընդունեցինք այն գեղը, վոր իբրև
համարլիք ու վեղու շրջաններում ամեն տեղ
արտեղյան ջուր կա, բայց այդ պետք ե ապա-
ցուցվի: Բայց դրանից պահանջվում է, վոր արտեղ-
յան ջուրն ըստ փորակի ել ընդունելի լինի: Վորպես-
զի ապացուցել արտեղյան ջրի առկայությունը կամ
բացակայությունը, անհրաժեշտ է տսենք՝ 100
մետր խորությամբ հոր փորել, այսինքն փորման
միջոցով հետազոտություն կատարել: Հայջրաբն-
տեսության և Անդրգեոտրեստի նյութերի համա-
ձայն, այդ փորման և գիտա-հետազոտական աշ-
խատանքների համար պահանջվում են միքանի
հարյուր հազարներ, և վոչ մեկը և վոչ ել մյուսը
յերաշխիք չեն տալիս և չեն ել կարող տալ, թե
ամեն տեղ բավականաչափ լավ փորակի ջուր-
կհայտնաբերվի: Վորքան Զանգիբասարի նկատ-
մամբ այդ խնդրի առթիվ ավելի կամ պակաս չա-
փով ճգրիտ տեղեկություններ կան, ընդհակա-
ռակը, վեդու և Ղամարլիք շրջանների նկատմամբ
այդ տեղեկությունները բացակայում են, վոչ
թե այն պատճառով, վոր վերջիններս վատ են
ուսումնասիրված, այլ նրա համար, վոր նախկին

հետազոտական աշխատանքները մինչեւ այժմս
այնպիսի բարենպաստ արդյունքներ չեն տվել,
վորոնք հույս ներշնչելին, թե այդ շրջանների
ջրամատակարարման խնդրիը հնարավոր ե լուծել
արտեղյան ջրհորների միջոցով:

Շատ տարիներ առաջ Արագգայանում արտե-
ղյան ջուր ստանալու փորձ կատարվեց. ջուրն
ստացվեց, բայց նա անպետք դուրս յեկավ թե
խմելու և թե անտեսական կարիքների համար՝
իր չափաղանց կոշտության պատճառով: 1933
թվի ընթացքում Կոմտնտժողկոմատը Անդրգեո-
տրեստի Հայաստանի բաժանմունքի միջոցով
կատարեց և ներկայումս ել կատարում ե հետա-
խուզական աշխատանքներ, վորոնց հետևանք-
ները՝ մեր կարծիքով, բավական անմիտթար են.
այսպես, որինակ՝ Ղուերի խորհնտեսության
ջրհորից արտեղյան ջուր ստացվեց 165 մետր
խորությունից, սակայն ջուրն անպետք դուրս
յեկավ: Աղհամզալվում ջուր ստացվեց 93 մետր
խորությունից՝ նույնպես անպետք: Ղամարլվում,
յերեք ջրհորներից ջուրն ստացվել ե 44 մետր
խորությունից, չնայած խմելու համար բա-
վարար վորակի, բայց իր կոշտությամբ
գերազանցում ե ընդունված մաքսիմալ նոր-
ման և այդ պատճառով նա հազիվ թե պետքա-
կան համարվի անտեսական և արդյունաբե-



բական կարիքների համար։ Այս ասածներից
չպետք է յեզրակացնել թե այլև վոչ մի փորձ
չպետք ե անել արտեղյան ջուր ստանալու ռւղ-
ղուժիամբ, այլ այդ ըշանների ջրամատակարար-
ման հիմք չպետք ե ընդունել այդ ջրհորները,
նախ՝ վոր արտեղյան ջրերի փորակը շատ
ցած ե աղբյուրների (Բաշ-Գառնու և Կըրի-Շու-
լաղի և այլն) ջրեց և յերկրորդ՝ այդ ջրհորների
ջրի ուղինապահ ողափործումը կպահանջի Ջրի
ճնշման թանկարժեք կառուցվածքներ։ Կասկած
չկա, վոր մոսակա 5—10 տարվա ընթացքում
նման ճնշման ցանցի կարիքն այդ խակ ըշաննե-
րում կզգացվի և միջոցներն ել կծախսվեն հենց
այդ ժամանակամիջոցում։ Հետևապես արտեղ-
յան ջրհորներ պետք ե փորել միայն այն սեղե-
րում, վորտեղ ազգաբնակությանը խմելու ջուր
տալու հարցը հանդիսանում ե ծայր աստիճան
ամսնետաձեղելի մի խնդիր, սահմանափակելով միա-
ժամանակ միջոցների ներդրումը, քանի վոր այդ
ծախսքերը՝ վերոհիշյալ պատճառաբանությամբ, չեն
արդարացնի իրենց, յեթե անգամ ընդունելու լի-
նենք 5—10 տարվա հեռանկարը։

Միութենական որդանների կողմից սահսաված կանոնների համաձայն՝ ջրամատակարարման նախագծերը կազմելիս պետք է նկատի ունենալ 10 տարվա ժամանակաշրջան։ Ուրիշ խոսքով, վորոն

շըջանի բնակավայրի կամ արդյունաբերական
ձեռնարկության ջրամատակարաբման գծով կա-
տարված՝ կապիտալ ներդրումները պետք ե իրենց
արգարացնեն այդ իսկ ժամանակաշրջանում,
կամ տրվող ջրի քանակը պետք ե հաշվել 10
տարի հետո պահանջվող ամբողջ կարիքը ծածկե-
լու համար:

Ավելի յերկար ժամանակաշրջան, որինակ
20—25 տարի հաշվի առնելիս, ինչպես այդ ա-
ռաջ ելին անում, կնշանակի անել իրեն տնտե-
սապես չարդարացնող ծախսերը։ Յեզ ընդհակա-
ռակը, ջրամատակարարման կառուցվածքների
ծառայության ավելի կարճ ժամանակաշրջան հաշ-
վի առնելիս, մենք խնդրի մասնակի լուծման
համար կփոշիացնենք մեր նյութական միջոցնե-
րը։ Յենելով այս խել դրությունից՝ ժամանա-
կաշրջանը վորոշելիս, մենք ընդունում ենք 10
տարի։ Վերլուծման տվյալները հիմք են հանդի-
տանում և իրավունք են տալիս մի կողմը թող-
նելու այդ շրջանների ջրամատակարարման բոլոր
աղբյուրները, բացի Բաշ-Գանուոց։ Նույն տվյալ-
ները և տնտեսական նկատառումները կասկածի
տակ են դնում արտեզյան ջրամատակարարման
հեռանկարի խնդիրը։ Մենք արդեն հիշատակել ենք,
վոր առողջ խմելու ջուրն ինքնին հանդիսանում
ե յեկամտի աղբյուր, վորի չափը վորոշել գծվար

ե և լավ աղբյուրներից կատարվող ջրամատակարարման ծախքերի գերազանցումն անդամավելի բավարար վորակի ջրի աղբյուրներից մեղ թելադրում են, վերջին հաշվով նախապատվություն տալ հաճախ առաջինին: Որինակ՝ կարելի յե հաշվել, թե վորքան ավելորդ սապօն ե ծախսվում կոչտ ջրի գործածության հետևանքով, կամ վառելանյութ ե այրվում այն պատճառով, վոր կոշտ ջրի մեջ պարունակվող աղերից կաթսաների պատերի վրա հաստ շերտեր են գոյանում, կամ վորքան խողովակներ են բաղնիքներում անպետքանում այդ աղաշերտերի պատճառով և այն, բայց և չես կարող հաշվել մի շարք գործոններ, վորոնք կապ ունեն մարդկային առողջության, նրա արտադրողականության, նյարդային սիստեմի հետ, յերբ մարդը խմում ե լավորակ կամ վատ ջուր: Մի գործոն ևս, վորը մեղ համար անվիճելի յե և ունի վոչ միայն առողջապահական, այլ և անտեսական նշանակություն և վորը կասկած ե առաջացնում ուրիշների մեջ, այդ այն խնդիրն ե՝ թե արդյոք լավորակ ջրի մատակարարումը չի պակասեցնի կամարլիքի շրջանի ազգաբնակության կողմից գործ ածվող գիշուու չափը: Հայտնի յե, վոր այդ շրջանի յերեխաներն անդամ շատ դեպքերում մեծ քանակությամբ գինի յեն խմում և այդ հանգամանքը մեղ

թվում ե, վոր հետևանք և մասամբ առողջ ջրի բացակայության:

Նախ քան Բաշ-Գառնու աղբյուրներից Ղամարլիքի և Վեդու շրջանների ազգաբնակության ջրամատակարարման հսարավորության ու նպատակահարմարության խնդրին անցնելը, անհրաժեշտ ե հիշեցնել կամարլիքի շրջանի մի քանի գյուղերի Կըրխ-Բուլաղի աղբյուրներից ջրամատակարարելու պատմությունը, վորովհետև նա յե, վոր միտք և հղացրել մեր մեջ զբաղվելու շրջանային ջրամատակարարմբ: 1927 թ. Նորագավիթ գյուղը՝ ցանկանալով աղբյուրի ջուրը ունենալ, Յերևանի քաղխորհորդի թույլատվությամբ իր ուժերով և իր միջոցներով, Յերևանից թուջի խողովակներով ջուրը տարավ Նորագավիթ: Այդ ջրատարի մոտակա հարևան գյուղերը (Թազագյուղը, Վերին և Ներքին Շնոգավիթները և Զարբախը), վորոնք ջրի տեսակետից նույն գրության մեջ ելին, ինչպես և Նորագավիթը, միացան ջրատարին, վերջինս համարելով իրենց համար առողջ խմելու ջրի ամենամոտ աղբյուրը:

Այսպիսով, մի քանի տարվա ընթացքում հինգ գյուղ միացան Յերևանի ջրմուղին: Կըրխ-Բուլաղի ջրի վրա հարձակվելու հետևյալ ետապը պետք ե լիներ Ռէլուխանլիքի և նրա հարևան գյուղերի միացումը նույն ջրատարին: Այդ մեծ գլխարությունը չեր ներկայացնի, յեթե ջրի քանա-

կը բավարարեր և նրանց կարիքը՝ Ռւլուխանլու-
յից կը թիւ-թուլաղի ջուրը հետզհետե կնվաճեր,
յեթե կարելի յե այսպես արտահայտվել, նորա-
նոր գյուղեր, քանի վոր նրանից գեղի Ղամար-
լի կողմն ընկած գյուղերը դանվում են միմյան-
ցից աննշան հեռավորության վրա և հաջորդ գյու-
ղը ջրատարից ջուր վերցնելու համար շատ չնշն
ծախքեր պետք ե կատարեր; Վոչ վոք իր ժամա-
նակին խնդիրն ավելի լայն չեր դըել և չեր նա-
խատեսել բոլոր գյուղերի ջրի կարիքը՝ կազմելու
համար նրանց ջրամատակարարման ընդհանուր նա-
խագիծը; Ներկայումս, վորպեսզի նոր-Խարբերդին
ջուր տրվի, անհրաժեշտ ե հին ջրատարին գուգահեռ
նոր ջրատար անցկացնել, այսինքն ծախսել ահա-
գին միջոցներ և մեծ քանակությամբ սուր դե-
ֆիցիտային թուջե խողովակներ:

Հնարավոր ե, ի հարկե, վոր Խարբերդի
ջրատարի կառուցումից հետո հարևան գյուղերը,
ինչպես այդ տեղի ունեցավ նորագավթի ջրա-
տարի նկատմամբ, կակսեն, յեթե նրանց թույլ
տրվի, միանալ նրան, մինչև վոր կվերցնեն ամ-
բողջ ջուրը և այն ժամանակ գուցե հարց ծագի
գյուղերի մի այլ խմբի համար յերբորդ ջրատա-
րը կառուցելու:

Նոր Խարբերդն արդեն Յերևանից ջուր
տանելու նախագիծն ունի և մտածում ե այն

իրագործել ընթացիկ տարում և այսպիսով յեր-
կու ջրատարի և իրենց ճյուղավորումների ընդ-
հանուր յերկարությունը կկազմի 17,526 մետր,
վորից այժմս գոյությունն ունեցող ջրատարի յեր-
կարությունն իր ճյուղավորումներով, վորն ապա-
սարկում է վերոհիշյալ հինգ գյուղերը, կազմում
և 8,563 մետր:

Պարզ ե, վոր խնդրի նման զատ-զատ լու-
ծումը չի կարելի նպատակահարմար համարել.
յեթե բոլոր հաշիվներն իր ժամանակին արվեր
10 տարվա ժամանակաշրջանի ընդհանուր կա-
րիքից յենելով, մենք կխուսափելինք ավելորդ
ծախսերից, իսկ վոր գլխավորն ե՝ կարգացնե-
յինք մի շարք այնպիսի գյուղերի ջրամատակա-
րարման խնդիրը, վորոնք դանվում են միատե-
սակ վատ պայմաններում և շրջակայրում չունեն
ջրամատակարարման պիտանի աղբյուրներ:

Այն ժամանակ, յերբ գյուղացիության հոծ
մասը՝ բաղկացած լինելով առանձին-առանձին
թույլ տնտեսություններից, կարողացավ կազմա-
կերպել լավորակ ու առողջ ջրի մատակարար-
ման խնդիրը, ապա ներկայումս ավելի մեծ հնա-
րավորություններ կան կարգավորելու այդ խըն-
դիրը, քանի վոր նույն գյուղացիության խոշոր
մասը՝ ներգրավված լինելով կոլտնտեսությունների
մեջ, ամրապնդվել ե տնտեսապես: Նման խիտ բնա-

կե ած շըջանի ջրամատակարարման խնդիրն
այժմս փորոշել ըստ առանձին գյուղերի աննպա-
տակահարմար է: Կամ այդ գյուղերը վերջին հաշ-
վով պետք է ջուր ստանան կըրիս-Բուլազից, կամ
Բաշ-Գառնուց և կամ վերջապես արտեղյան ջր-
հորներից:

Արտեղյան ջրամատակարարումն ընտրելիս,
յեթե ջուրն, ի հարկե, պիտանի լինի բոլոր կա-
րիքների համար, հավանական է, անտեսապես
ավելի ձեռնուու կինի վոչ թե յուրաքանչյուր
գյուղի համար առանձին ջրհոր փորելը, այլ նպա-
տակահարմար կինի գյուղերի մի խմբի համար
մեկ կոմ մի քանի ջրհոր փորել և գյուղերը ջրա-
ռար ցանցով միացնել ընդհանուր ճնշման աշ-
տարակին:

Բայց, ինչպես ասացինք, տվյալ պլաններում
հասակատասխան փորակի արտեղյան ջուր չկա
լի յեղածնել գտնվում է սահմանափակ տերի-
տորիայում: Յեխելով այդ բոլորից, Հայաստանի
ժողկոմիսորչը և Վեհափոխը վորոշում են ընդունել,
վոր Համարելին և Վեդու ջրամատակարարման
հիմնական աղբյուրը պետք է համարել Բաշ-Գառ-
նին: Ինչ վերաբերվում է կըրիս-Բուլազին, նրա
ջուրը տնտեսապես ավելի նպատակահարմար է
մատակարարել Յերևանից մինչև Ռուլուխանլու ըն-
կած գյուղերին: Բացի դրանից, Յերևանի աղբա-
յիմանու ջուռամասնոր խոյն:

-ա2թողակ մանմ ամբատաւա

բնակության և արդյունաբերության կողմից առա-
ջադրվող ջրի մեծ պահանջը թույլ չի տալիս
կըրիս-Բուլազի ջուրն ավելի լայն ողտագործելու,
նամանավանդ վոր յերկրաբանների կարծիքով՝
Բաշ-Գառնու ջուրը՝ ունենալով նույն ծագումն,
ինչ վոր և կըրիս-Բուլազինը, նրան իր փորակով
չի զիջում և վեդու ու Դամարլի ցջանների
նկատմամբ գտնվում է աշխարհագրական նպաս-
տավոր պայմաններում, վորը թեթևացնում և եժա-
նացնում է ջրամատակարարման աշխատանքները:

Բաշ-Գառնու աղբյուրները բաժանվում են
յերկու մասի՝ վերին և ներքին, համարյա միա-
տեսակ կարողությամբ, վորոնց ջրի ընդհանուր
գերիար կազմում է մեկ վարկյանում 300 լիտր,
այսինքն որական կարող են տալ 2 միլիոն գույ-
թից ավելի: Վորագնազի պարզ պատկերացնել ջրի
այդ քանակը, հիշեցնում ենք, վոր Յերևանի 130
հազար աղբայինակությունը ներկայումս բանեց-
նում է որական ընդամենը 600 հազար դույլ:
Յեթե ընդունելու լինենք, վոր առաջիկա 15—20
տարում յերկու ցջանում աղբայինակության թի-
վը կըրկնապատկիվ և կհասնի 100 հազարի, հաշ-
վի առնելով անասունների, արդյունաբերության
և այլ կարիքները, այդ գեպբում ջրի ընդհանուր
պահանջն որական կկազմի 500—600 հազար
դույլ, այլ խոսքով, Բաշ-Գառնու աղբյուրների

ջրի ^{1/3}-ը վերցնելով՝ հնարավոր կլինի 15—20
տարվա ընթացքում բավարարել այդ շրջանների
ամբողջ պահանջը։ Հետևապես, աղբյուրների առ-
կա ջրի քանակին ավելի քան բավական է, իսկ
վորակին այնքան լավ է, վոր շատ քիչ բնակա-
վայրեր միայն ունեն նման ջուր։ Հնարավոր և
արդյոք ինչդրի լուծումը տեխնիկա-տնտեսական
տեսակետից։ Կարող ենք արդյոք տվյալ ետա-
պում դնել այդ ինդիքը։ Այդ հարցերին պատաս-
խանելու համար, կոմտնտժողկոմատը 1932 թվի
վերջում հանձնարարեց մասնագետներին կազմել
այդ շրջանների ջրամատակարարման սքեման
ու նախահաշիվը։ Սքեման քննության առնվեց
կոմտնտժողկոմատի գիտական-տեխնիկական խոր-
հրդի կողմից (1932 թվի գեկտեմբեր 22-ին)
և նախագիծը համարվեց առաջարրված խնդրի
միակ ճիշտ լուծումը, պայմանով, վոր հետագա-
յում բավարար չափով հիմնավորվի արտեզյան
ջրամատակարարման անհնարին լինելը կամ նրա
անշահավետությունը։ Նման մի վորոշում ընդու-
նեց նաև Հայաստանի ժողկոմիսորնը։

Կոմտնտժողկոմատը 1933 թվի ընթացքում ար-
տեզյան ջրեր հայտնաբերելու հետազոտական աշ-
խատանքների վրա ծախսեց մոտ 99.000 ռ. և ինչպես
արդեն ասացինք, հետևանքները բավական միի-
թարական չեղան։ 1934 թվին յենթաղրվում ենույն

նպատակի համար ծախսել ևս 160.000 ռուբլի,
աշխատանքները սահմանափակելով միայն հետա-
զոտված տերիտորիայում, կառուցելով ջրհորներ
միայն այնտեղ, վորտեղ վստահություն կա ջուր
ստանալու և վորտեղ խմելու ջրի մատակարա-
րումը հնարավոր չե 2—3 տարով հետաձգել։

Ծնցնելով Բաշ-Գառնուու աղբյուրներից ջրա-
մատակարարման նախագծի նկարագրությանը,
անհրաժեշտ ե կրկնել, վոր այդ նախագիծն ընդ-
գրկում ե յերկու շրջանի գյուղերը, սահման ունե-
նալով մի կողմից նախիջնանի հանրապետու-
թյունը, մյուս կողմից Ուլուխանլուն։ Տնտեսա-
կան տեսակետից շահավետ ե Յերևանից մինչև
Ուլուխանլու ընկած գյուղերը միացնել Յերևանից
ցանցին, հատկապես նկատի ունենալով, վոր
նրանցից մի քանիսը, ինչպես վերևում հիշա-
տակվեց, մի շարք տարիներ առաջ արդեն միա-
ցել են այդ ցանցին։

Բաշ-Գառնուու աղբյուրներից յենթաղրվում ե
վերցնել 80—90 լիտր ջուր մի վարկյանում։
Ջրատարը՝ սկիզբն առնելով վերին կամ ներքին
աղբյուրներից, վերջանալու յե վերին Աղբաշ գյու-
ղի շրջանում, այսինքն ջրի ակունքներից 20 կի-
լոմետր հետափորության վրա։ Հետագայում մեկ
մագիստրալը գնալու յե գետի Դվին, Նորա-
շեն, Դարղալու և այլ գյուղերը, մինչև Արագդա-
յան, իր ճյուղերը տալով բոլոր գյուղերին։ Մյուս
մագիստրալը գնալու յե Ղուլլասար, Իմանշալու-

Թոխանշալու, Դամարլու մինչև Շիդլու, նույնպես
իր ճանապարհին ջուր մատակարարելով յերկու
շրջանի այդ մասի բոլոր գյուղերին:

Հիմնական և համեմատաբար թանկ նստող
աշխատանքն այդ ջրատարի կառուցումն է 20
կիլոմետր յերկարությամբ, փորից 19 կիլոմետրը
մին ընթացքի յե լինելու (խօստոյ խօ), այ-
սինքն ջուր չի մատակարարելու և վոչ մի գյուղի:
Այդ ջրատարը կարող է լինել բետոնից կամ
փայտից: Բոլոր տվյալները ցույց են տալիս, փոք
ձեռնատու յե ընդունել փայտե ջրատարը, քանի
փոք այդ գեղքում բացասվում է ջուրը ճանա-
պարհին կեզառութելու հնարավորությունը, յեր-
կերպ հնարավոր կլինի կրծատել յերկարությու-
նը և ընդգրկել սպասարկման ավելի լայն շրջան,
և վերջապես, ունենալով վոչ գեղիցիտալին փայ-
տի խողովակներ, հնարավոր կլինի դգալի չափով
կրծատել աշխատանքները, փորովինետե պատրաս-
տի խողովակներ ունենալու գեղքում, մնում է
միայն կազմակերպել հողային աշխատանքները
և դնել խողովակները:

Այդ աշխատանքների յուբաքանչյուր գծային
մետրի մոտավոր արժեքը կազմում է 35—40
ռուբ. կամ 800 հազար ամբողջ ջրատարի համար,
փորից 400—450 հազար կազմում է խողովակ-
ների արժեքը, հետեւապես, մենք ծախսելով այդ
գումարը, կամ առ առավելին 1.200 հազար ռուբ.,

հսարավորություն կունենանք Դամարլի խիտ
բնակեցրված շրջանի այդ մասում ունենալ լավո-
րակ խմելու ջուր՝ որական մոտ 600 հազար
դույլ: Զբատարի ծայրը, վորտեղից ստացվելու և
այդ ջուրը, կարելի համարել իբրև մի նոր աղ-
բյուր, վորտեղից պետք է ջուր մատակարարվի
յերկու շրջանների բոլոր գյուղերին: Այստեղ
ևս տեղի կունենա այն յերևութը, վորը տեղի
ունեցավ Նորագալիթի շրջանում. առաջին հեր-
թին ջրատարին կմիանան մերձակա գյուղերը
և այլն: Զի անցնի 3—5 տարի և ամբողջ շրջանը
կծածկվի ջրմուղի ցանցով:

Այդ միացումները համարլի շրջանում կկա-
տարվի չափազանց արագ տեմպերով, քանի փոք
գյուղերը միմյանցից հեռու յեն գտնվում 3—4
կիլոմետր, իսկ մեծ մասամբ այդ տարածությու-
նը 1—2 կիլոմետրից չի անցնում և այդ գյու-
ղերի մեջ չի գտնվի և մեկը, փոք հնարավորու-
թյուն չունենա ամենակարճ ժամանակամիջոցում
ջրատարը հասցնելու գյուղ, անգամ գոնե կավե-
խողովակներով: Անհրաժեշտ է միայն նախորոք
կազմակերպել ու կատարել աշխատանքները հա-
մաձայն գեներալ նախագծի, փորպեսզի խուսա-
փել հնարավոր սխալներից: Հայաստանի ամենա-
հարուստ գյուղատնտեսական շրջանները, տնտե-
սության կոլեկտիվ ձևերը, ՄՏԿ, ամուր կուսակ-
ցական և խորհրդային կազմակերպությունները

դրավական են, վոր այդ բոլոր աշխատանքները կողանտեսությունները կկատարեն մաքսիմալ կազմ ժամանակամիջոցում և ավելի կբարելավեն իրենց կուլտուր-կենցաղային պայմանները:

Յեթե ներկայումս կոլտնտեսությունը հսարավորություն ունի վճարելու արտեղյան ջրհորի փորման 10—15 հազարի հասնող ծախքերը, հատկապես վորպեսզի խմելու ջուր ստանա, առավել ևս նա 1—2 տարուց հետո կարող կլինի իր աշխատանքով կատարելու 1—2 կիլոմետր յերկարության հողային աշխատանքները և վճարել միայն խողովակների արժեքը, վորպեսզի ստանա այնպիսի ջուր, վորը կբավարարի նրա բոլոր կարիքները:

Ի՞նչ միջոցներով պետք է կառուցվի հիմնական ջրատարը: Հիշված ընդհանուր գումարից մոտ 400 հազար ոռոք, կկազմի խողովակների արժեքը և 250 հազար՝ մնացած նյութեղենները և վորակյալ բանուժի աշխատավարձը: Ընդգամննեա այդ նպատակի համար կպահանջվի վոչ ավելի 650 հազար ոռոք, վորը պետք ե, մեր կարծիքով, ձեռք բերվի յերկարատև վարկի. միջոցով 1934—1935 թվերի ընթացքում:

Մնացած աշխատանքների արժեքը պետք է վճարեն կոլտնտեսությունները և ջրի այլ սպառովները դրամով, կամ նատուրայով, քանի վոր վերջնիս տակ մենք հասկանում ենք միայն հո-

դային և ժայռային աշխատանքները, վորոնք հեշտությամբ կկատարվեն իր իսկ ազգաբնակության ուժերով:

Կոմտնտժողկոմատի գիտական տեխնիկական խորհրդի ցուցմունքների և յերկան յեկած նոր հանդամանքների հիման վրա սկսված և ջրատարի տեխնիկական նախագիծը կազմելու աշխատանքները: 2—3 ամսից հետո կվորոշվի այդ աշխատանքների ավելի ճշտված նախահաշվիք և վերջնականապես հճշտվի նաև ճնշման փայտյա ջրատարի ուղղությունը:

Մեզ թվում ե, վոր ավելի մանրամամն հաշիվսերի արդյունքը՝ թե տեխնիկական մասի և թե արժեքի նկատմամբ, հավանական ե, վոր շատ բանով չի տարբերվի այն թվերից, վոր մենք բերինք այստեղ:


Յեթե անդամ արժեքի նկատմամբ ստացվի վորոշ արբերություն, այդ դեպքում մի այլ նոր ընդունելի վարիանտ, վորն իր տեխնիկա-տնտեսական և հատկապես սանիտարա-առողջապահական հիմնավորումով լուծեր տվյալ շրջանների ջրամատակարարման անհետաձգելի խնդիրները, մենք չունենք:

Այս խնդրի առաջադրումը կատարվում ե, մեր կարծիքով, իր ժամանակին, իսկ նրա կատարումը հսարապոր ե տվյալ կոնկրետ պայմաններում: Նրա հաջող լուծման համար անհրաժեշտ

կազմակերպել կոլտնտեսական և անհատ գյուղացիությանը, նրանց սեփականությունը դարձնել կուսակցական և խորհրդային որդանների վերջին շաբաթ ընթացքում այս խնդրի շուրջն ընդունված վորոշումները և ծանոթացնել նրանց ջրմուղի նախագծի բովանդակության հետ:

Առողջ ջրի խնդիրն այսքան մոտ ե Ղամար-
լի՛ ու Վեդու շրջանների գյուղացիներից յուրա-
քանչյուրին, վոր մեծ աշխատանք չի պահանջի-
կարձ ժամանակամիջոցում ապահովելու նրանց
մասնակցությունն ու լրիվ պատրաստակամու-
թյունը կատարելու առաջադրված ինոգիրը, վոր!-
հետևանքներն յերևան կդան մոտակա տարինե-
րում և խթան կհանդիսանան այդ շրջանների
կողմանտեսությունների վոչ միայն կուլտուր-կեն-
ցալային, այլև տնտեսական վերելքին:

Վերջացնելով այս ակնարկը, մենք չենք կարող չնշել այն ուրախալի փաստը, վոր Ղամարդիկի արձանի կուս. Կոմիտեն, Շրջգործկոմը, ՄՏԿ Քաղբաժնը և աշխատավորության ամբողջ ակտին արդեն արձագանքել են այս խնդիրին և ներկայումս արդեն առաջադրված վարիանտը վոչ մի հակառակորդ չունի, և անգամ նրանք, ովքեր ջրամատակարարման խնդիրը հնարավոր ենին գտնում լուծել այլ վարիանտներով, այժմ միակ ճշգրիտ համարում են «Բաշ-Գառնու» վարիանտը:



32

«Ազգային գրադարան»



NL0276745

25 ЧПЧ.

13 950



Н. АКОПЯН

Водоснабжение Камарлинского и
Веденского районов

Сельхозгиз

1934

Эривань